

1999

07 ապրիլ + 92 մայիս 93


ՈՒՐԵ ՀԱՅԻ  
ԻՆՔՆԱԽԱՆԱԳՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՄԱՆԿԵՑ

ԱԲԵԼ ԱՊՐԵՍԵԱՆ:



Հ Ա Պ Ի



ԹԻԳԼԻԶ  
ՏԵՂՄԱՆՈՒՅՆ  
ՏԵՂՄԱՆՈՒՅՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ  
ՕՐԵԼԸՆԵԱ ՓՈԽՈՅ, 5  
1884

ՊՐԻԿԱԶԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ „ՔԱՎԿԱՅԻ“  
ԼՐԱԴՐՈՒՄ:

Վաճառվում է պարտքի դիմաց	
«Գրեգոր և Անդրէաս Արծրունի եղբայրների երեք	
լարկեան քարաշէն Գալէրեան քաղաքի Ա-մասում	
Արքունական փողոցի վրայ 1135. քռ. սաժեն տեղով,	
Խսկական պարտք 380,594. 77 կ.	
Ապառիկ 34,174. 60 կ.	
<hr/>	
Բոլորը 414,769. 37 կ.	

2-րդ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

(Գարձեալ պրիկազի և միւնոյն օրուայ համար:)	
Վաճառվում է:	
Եղբարք Գր. և Արդրէաս Արծրունիների երկար-	
կեան քարաշէն տուն այգիով. քաղաքի Ա-մասնում:	
Տեղ 1590 քռ. սաժեն:	
Խսկական պարտք 56,551. 90 կ.	
Ապառիկ 3,728. 90 »	
<hr/>	
Բոլորը 60,280. 80 կ.	

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Мая 1884 г.  
Типографія И. Мартиросіанца, Орбеліан. ул., 5

28. 945

4241. 60

ՈՒՐ Ե ՀԱՅԻ

## ԻՆՔՆԱՇԱՆԱՉՈՒԹԻՒՆԸ

Ինքնաճանաչ է այն ազգը, որ գիտէ գնահատել իր գործիչներին, որ գիտէ պահպանել այն հաստատութեանց գոյութիւնը, որոնց մասին նա համակրութեան աղաղակներ է արձակում, որ գիտէ քաջալերել և խրախուսել այն անձանց, որոնք իրենց միտքը, գրիչը, փողը նուիրում են յօգուտ այդ ազգի և որն, ընդհակառակը, գիտէ որոշել իր վնասողներին, իր յառաջադիմութեան ընթացքը խանգարողներին: Սակայն այդ գնահատութիւնը, համակրութիւնը բնչով պիտի լինի, լոկ խօսքով թէ գործքով: Եթէ գործքով, ապա ուրեմն ներկայումս մի խիստ յարմար առիթ է ներկայանում, մեր կարծիքով, այդ ինքնաճանաչութիւնը արտայալտելու. մի պատեհ առիթ է ներկայանում, այս, տեսնելու, թէ այս վերջին տաս տարուայ ջանքերը, ընդհանուր լուսաւորութեան խթանը և մղումները կարողացել են կերպարանափոխել հային, որ նա բարոյական, գաղափարական շահերի համար փոքր ինչ գոհէ և նիւթական շահերը:

Այդ առիթը և պատեհութիւնը «Պշակ» լրագրի գոյութեան սպառնացող վտանգն է, նորա խմբագիր պ. Գ. Արծրունու ունեցած Փինանսական նեղ կացութեան պատճառով, կացութիւն, որ ոչ միայն վտանգի է ենթարկում այն թերթը, որ առաջինն եղաւ հայերի մէջ, եւրոպական մտքով առած լրագիրը, այլ որ սպառնում է ամեն տեղ հարուստ հրոշակուած խմբագիր պ. Գ. Արծրունուն դժնդակ ըրքաւորութեան մէջ ձգելու: Մենք կարծում ենք, հասել է ըոպէն, որ հայ ժողովուրդը կստարէ իր պարտականութիւնը, որովհետև մենք գտնում ենք, որ հայ հասարակութեան պարտականութիւնն է օգնել պ. Գ. Արծրունուն պատռաւոր կերպով դուրս գալ իր նեղ դրութենից և շարունակել այն գործը, որի մասին այդ հասարակութիւնը այնքան համակրութեան ցոլցեր է անում Կովկասի հայ քաղաքների զանազան անկիւններից: Եթէ մի գործ, մի հաստատութիւն սիրելի և համակրելի է, ապա ուրեմն առաջին պայմանն և պարտաւորութիւնը հաւաստակութեան կողմից նրան պահպանելն է, այլապէս պէտք է ենթարկել, որ այդ բոլոր համակրութիւնը կամ կեղծ է եղել, կամ անդիտակցական:

Բայց նախ պատմենք եղելութիւնը երկու խօսքով՝ ի տեղեկութիւն հայ ժողովրդեան:

Ինչպէս լայտնի է, Արծրունի եղբայրները Թիֆլիսում ունեն ահագին կալուած, որը գտանվում է այդ քաղաքի առաջին և ամենալաւ փողոցի վրայ և որի արժէքը հեշտութեամբ կարելի է մի միլիոն

գնահատել, եթէ այժմ Թիֆլիսում կալուածների գները պակասած չը լինէին: Բայց այդ կալուածը պրիկազի առաջ պարտքի տակ է, այն է մօտ 400 հազար բուբլիի մի գումարով, որը վճարելու այժմ Արծրունի եղբայրը չեն կարող, առձեռն դրամ չունենալու պատճառով: Պակայն ՚ի հարկի պարտքը պէտք է վճարուի, այլապէս կալուածը կը ծախուի աճուրդով: Յայտնի է, որ եթէ այդ կալուածը աճուրդի դնուի, մինչև անգամ իր պարտքը (400 հազար) չէ կարող հանել, ուրեմն այն ժամանակ Արծրունի եղբայրներին սպառնում է կատարեալ սնանկութիւն: Եւ ահա ամբողջ 14 տարի հայ գրականութեան մէջ գործող, հայերի մէջ օրագրական մամուլը ստեղծող, հայ թատրոն կառուցանող, եւրոպական ալանասոր գիտնականների առաջ հային ներկայացնող և նրանց արժանավայել կերպով ընդունող անձը, բնկներակչքաւորութեան մէջ պէտք է ոչ միայն այլ և անկարող լինի այդ գործերը անելու, այլև խիստ յուսահատական եղբակացութեան կարող է գալ, որ նա իզուր տեղ այնքան աշխատեց հայերի համար, ՚ի զուր տեղ վատնեց իր երիտասարդութիւնը, իր ասպարէզը, իր ահագին հարստութիւնը հայ ժողովրդեան օգնելու համար, մինչեռ նա կարող էր ուրիշ հարուստ երիտասարդների նման, հօրից ահագին ժառանգութիւնը ստանալուն պէս, ծախէր այդ բոլորը, վող շինէր, վազէր Եւրոպայ և այնտեղ իշխանական կեանք վայելէր, ինքն ևս իր եղբայր Անդրէաս Արծրունու նման կետևէր պրօֆէսօրութիւն և գիտնական համ-

բաւ ձեռք բերելու: Բայց նա այդ բոլորը զոհեց և զոհեց հայ ժողովրդեան համար: Եւ միթէ այդ ժողովուրդը այսօր անտարբեր կերպով պէտք է նայէ թէ ինչպէս այդ գործիքը գլորփում է անկման անդունդի մէջ, միթէ նա օգնութեան ձեռք չը պէտք է կարկառէ արգելելու նրան ընկնել այդ անդունդի մէջ, մանաւանդ որ, ինչպէս այժմ կը տեսնենք, այդ օգնութեամբ հայ հասարակութիւնը չէ կորցնելու ոչինչ: Ամեն զգացման տէր և ազնիւ սիրտ կը վկայէ, որ, այս, հարկաւոր է օժանդակութեան ձեռք կարկառել, մանաւանդ որ խնդիրը «Մշակ» լրագրի գոյութեան մասին է:

Բայց ով է «Մշակ»:

«Մշակ» նա է, որ հային ընթերցանութիւն սովորեցրեց, որ հայի մէջ գաղափարներ և ձգտումներ ներշնչեց.

«Մշակ» նա է, որ մտաւ զանազան խուլ անկիւններ, այցելեց այնտեղ ընկած, անշարժութեան մէջ գտնուող ոյտերը, ՚ի գործունէութիւն հրաւիրեց նրանց, նոր ոյտեր ստեղծեց, միջոց տուաւ նոյա, ոչ միայն բարոյական, այլև նիւթական, իրենց ձիրքը, տաղանդը հրապարակ հանելու յարտափայլեցնելու:

«Մշակ» նա է, որ լուսաւորեց խաւար տեղերը, լոյս ձգեց շատերի գործունէութեան վրայ, զգաստացրեց նրանց...

«Մշակ» նա է, որ վհատած, յուսահատած ժողովրդական ուսուցիչներին խրախուսեց, նոյա գործունէութիւնը ազնուացրեց: Միջոց տուաւ մի քանի

զրականական տաղանդներին երևան գալու և աշխատելու հայ աղքատիկ զրականութեան ասպարիզում: «Մշակն» նա է, որ միջոց եղաւ Տաճկաստանի և Թուսիոյ հայերի միմեանց հետ ծանօթանալուն.

«Մշակը» նա է որ Եւրոպային ծանօթացրեց հայի հետ, որի յօդուածները անդադար թարգմանվում էին Եւրոպական լրագիրներում:

«Մշակը» նա է, որի խմբագիրը, իր բոնածդիրքի շնորհիւ, կարողանում էր արժանավայիլ կերպով ընդունել Եւրոպացի ականաւոր գիտնականներին, որոնք այցելերով նրան, ինչպէս օրինակ Վիրխով, Կոնտովի (թղթակից Տանի), Մակրոնալդ (թղթակից Թալմով) և այլք, նրանից էին տեղեկութիւններ ստանում հայերի մասին:

«Մշակը» նա է, որ առաջինը արծարքեց այն միտքը, թէ բոլոր հայերը լուսուորչական լինի, կաթոլիկ թէ բողոքական, մի մարմին, մի ազգայնութիւն են կազմում, որովհետեւ լեզուի, և ցեղական ծագումով ու պատմութեամբ մի են, ուստի և պէտք է ներողամտութիւն (tolérance) ունենալ:

«Մշակը» նա է, որ Արարատեան ընկերութեան, սովելոց և Վանայ հրկիզելոց ընկերութեանց համար բաւականին մեծ գումար ժողովեց և օգնութիւն հասցրաւ Տաճկաստանի հայերին:

Վերջապէս «Մշակը» նա է, որ հայ մամուլի աճման և բարգամաճման համար հող պատրաստեց:

Եւ ահա այսօր վերահաս վտանգը սպառնում է այդ ամենը ոչնչացնելու:

Միթէ այդ պիտի թուլատրէ հայ հասարակութիւնը:

Եթէ այդ տխուր իրողութիւնը տեղի ունենայ ևս առաւել ծանր պիտի լինին նրա հետևանքները: Ազգային ինքնասիրութիւնը և պատիւր պիտի վիրաւորուի, Թուսիան և Եւրոպան պիտի իմանան, որ «Մշակը», հայոց ամենից շատ հոչակուած լրագիրը, դադարեցրեց իր գոյութիւնը հայ ժողովրդեան անտարերութեան շնորհիւ: Այդ տխուր օրինակը իր համար լաւ դաս համարելով, այլևս ոչ մի հարուստ երիտասարդ, ոչ մի ուսումնական չի համարձակի իր անձը և փողը նուիրել ազգային գործունէութեան և լրագիր հրտարակել, վերջապէս հայ հասարակութիւնը ապագայ պատմութեան դատապարտութիւնը պիտի կրէ և ցոյց տայ թէ դեռ որքան հեռու է ինքնամանաշութիւնից:

Հայ հասարակութիւնը յօբելեան կատարեց «Մեղու» լրագրի 25 ամեալ գործունէութեան մասին,

Հայ հասարակութիւնը միւնոյնը կամենում է անել պ. Ռաֆֆիի վերաբերմամբ: Միթէ այդ հասարակութիւնը պիտի լրէ այժմ. երբ «Մշակը» և նրա խմբագիրը կորստեան վտանգի մէջ են, միթէ այդ հասարակութիւնը ապերախտ պիտի գտնուէ դէպի նրանց: Մենք հաւատ ունենք հայի երախտագիտութեան վրայ. մենք կամենում ենք հաւատալ, որ հայ հասարակութիւնը այնքան ինքնաճանաչ և պատուի զգացում կունենայ, որ թոյլ չի տայ գործերը մինչև այդտեղ հասնի, այլ ընդհակառակը, Թիֆլիսի, Բագուի և այլ

քաղաքների կապիտալիստ հայերը կը միանան, ձեռք կը բերեն Արծրունի եղբարց կալուածը և այդպիսով կազմեն վերահաս վտանգից պ. Գր. Արծրունուն, ու միջոց կը տան նորան շարունակելու անընդհատ եր գործունէութիւնը: Միանգամայն համոզուած ենք որ հայ կապատալիստները բացի այն, որ մի «ազգասիրական» գործ ևս կատարած կը լինին, բայց միենոյն ժամանակ իրենք ոչ մի վնաս չեն կրի: Ահա թէ ինչպէս:

Մենք ամենևին չենք խնդրում, որ հայ կապիտալիստները նիւթական օգնութիւն հասցնեն պ. Արծրունուն. ոչ, այլ այստեղ գլխաւոր խնդիրը նրանումն է, որ քանի որ պարտքը վճարելու համար կալուածը պիտի ծախուի, հայ հարուստները այնպիսի միջոցներ ձեռք առնեն, որ նախ այդ կալուածը, որի մէջ գտնվում է և նորակառուց գեղեցիկ թատրոնը, ընկնէ ուրիշների ձեռք, երկրորդ, արգելերով աճուրդով ծախելը. այնպիսի մի գնով ծախուէ, որ և պարտքը վճարուի, և այնքան փող մընայ, որով պ. Գր. Արծրունին, կարողանայ ապահովուած լինել և առաջուայ պէս շարունակել իր գործունէութիւնը: Այստեղ մեր կարծիքով, վաճառականները ոչինչ չեն կորցնում. դա մի առևտրական ձեռնարկութիւն է, այն զանազանութեամբ միայն, որ իրենց դրամագլուխը փոխանակ 10% բերելու, գուցէ 8% բերէ, բայց դրա փոխարէն դրամագլուխը շատ ապահով տեղ կը լինի դրած: Եւ միթէ 2% լը զանազանութիւնը պիտի կանգնեցնէ հայ հասարա-

կութեանը մի բարի և երախտագիտական գործ կատարելու:

Այդ բոլորը կարելի է հեշտութեամբ լրագործել, եթէ այն ակցիօնէրական ընկերութիւնը, որ առաջարկուեցաւ «Մշակի» միջոցով իրագործուէր: Եթէ կարելի եղաւ Արձրունու եղբարց բոլոր կալուածները, բայց այն տնից, ուր բնակվում է պ. Արձրունին, և որն պէտք է պահել նրա համար, ծախել 600 հազար բուբիով, այն ժամանակ և պարտքը (400 հազար) կարելի է վճարել և մնացեալով բոլորովին կարելի է ապահովացնել իր նախկին պատուաւոր գիրքի մէջ պահելու «Մշակի» խմբագիր պ. Գրիգոր Արձրունուն: Միթէ հայ կապիտալիստների մէջ չկատնուի 300 հոդի, որ ամեն մինը 2000 բուբի տայ և մի ակցիայ գնէ, մանաւանդ որ այդ 2000 բուբին կարելի է մինչև անզամ ոչ միանուագ, այլ աստիճանաբար վճարել: Մենք կարծում ենք, որ այդ շատ հեշտ է անել, ուստի և յոյս ունինք, որ հայ վաճառականները և կապիտալիստները անպատճառ կիրագործեն այդ դիտաւորութիւնը և կը կազմեն այդ ակցիօնէրական ընկերութիւնը:

Այդ քազով հայ հասարակութիւնը կապացուցանէ աշխարհին, որ նա գիտէ գնահատել իր գործիչներին, որ նրա մէջ զարժած է ինքնաճանաչութեան և երախտագիտութեան զգացմունքը:

Յուսանք և սպասենք,

Թող հայ հասարակութիւնը չը կարծէ, որ մենք պ. Արձրունու և «Մշակ» լրագրի պահէգերիստն ենք.

ոչ. մենք մինչև անզամ շատ հարցերում համամիտ և համերաշխ չենք «Մշակի» քարոզած մտքերի հետ: Մենք մի և նոյն կերպով կը պաշտպանէինք և ուրիշ ազգային համանման գործիչներին, եթէ նոքա ևս նոյն դրութեան մէջ գտնուէին: Մենք կամենում ենք մի ապացոյց ունենալ թէ որքան հայերի մէջ գնահատվում է հասարակական գործունէութիւնը: Դա խիստ կարևոր է, ազգի քաղաքակրթութեան չափը որոշելու համար: Ժողովուրդը պէտք է հասկանայ որ մի և նոյն չէ, եթէ սնանկանում է ա, բ, գ, կամ դր. Արձրունի:

Թէֆլոն. 1884 թ.

Մայիս 20.

Հ Ա Խ Ա Տ Ա ՞ Ն Ք:

Վերջին օրերում մենք լսեցինք, որ մի խռոմբ  
Թիֆլիզի նշանաւոր անձինքներից ներսէս Պատրի-  
արդին պատուելու առթիւ մտադիր են բանալ ստո-  
րագրութիւն Արծրունի եղբայրների գալերեան գնելու  
և ներսի Թիֆլիս ժամանելիս նրան ընծայեան համար:

Ո՞րքան հիանալի դիտաւորութիւն որ յափտեան  
պատիւ կարող էր բերել մեր յարգելի ազգայիններին:

Միթէ կարող են կատկածել. կարող են առար-  
կել որ այդպիսի մի նպատակ իրագործուել չէ կարող:

Մենք հաւատացած ենք որ ոչ, եթէ գործին  
գլուխ կ'անցնեն մի քանի նշանաւոր ազգայիններ.  
Հայի սրտում դեռ չէ մեռած ազնիւ ձգտումներ, և  
այն ազգը որ միահմուռ բաղձանքով ցանկանում էր  
ներսէսին Արարատեան գահի վրայ տեսնել. այդ ազ-  
գը մի բարի անդամ չի վարանիլ իւր անկեղծ զգաց-  
ման կատարեալ արտայատութիւնը ցաց տալու և  
գործով:

Սկսեցէք պարոններ. բոլորովին վստահ լինելով,  
որ ամեն կողմից. այս, ամեն կողմից դուք հանդի-  
պելու էիք զգալի համակրանաց:

Թող արդիւնքները այն կալուածքի, որ ամբողջ  
տասնեակ տարի մի ամբողջ սերունդ կրթում էր,  
այսուհետեւ էլ գործադրուէր հազարաւոր հայ զա-

ւակների ճշմարիտ հայի հոգիով կրթուելուն. և այդ  
Զեր գործը պատմութեան էջերի վրայ անկասկած  
Զեր յարգելի անունների հետ միասին մի փառաւոր  
տեղ կը բռնէ:

— Յուսանք:

— Բայց իրաւունք ունինք յուսալու:

Իսկ առ այժմ մինչև ամսի 22-ը անպատճառ  
հարկաւոր էր ձեռք բերել գոնէ 40,000 ըուբլի ա-  
ճուրդի ժամանակը մի 6 ամսով յետ ձգելու առթիւ  
իսկ այսուհետեւ հեշտ էր:

Սակայն չլինի որ մէկի յուսով, միւսն էլ մո-  
ռանանք. չլինի որ դանդաղութեամբ վաղը միւս օր  
ձգելով այնպէս անենք որ մօտիկ ապագայում մինչև  
այդ անիծուած օրը ոչինչ չկարողանանք շինել, իսկ  
նրանից յետով...

Նրանից յետոյ ամեն ինչ վերջացած կ'լինի. և  
բացի փոշմանելուց ու ափսոսալուց ուրիշ ոչինչ չի մնայ  
մեզ անելու:

Կամ մէկը և կամ միւսը բայց վերջապէս շու-  
տով: Ժամանակը թանգ է:

Յունիսի 8-ն.

Աբել Ապրեսեանց.

ՀՀ Ազգային գրադարան



NL0255045

